երբեմն նա ասում էր՝ թէ որքան լաց կը լինէր, եթէ ինձ չգտնէր, թէ նա բոլոր գիշերը կը պտռէր ինձ, մի՛շտ կը պտռէր: Յայտնում էր՝ թէ իմ պառկած տեղը շատ վատ տեղ է, եւ նա ուրախ է, որ վտանգ չէ պատահել ինձ. ասում էր՝ թէ այն ձորը կոչւում է Ղանլի-Դարայ (Արիւնոտ ձոր), որովհետեւ քիչ չէ պատահում, այնտեղ գտնում են սպանուած մարդերի դիակներ: Բացի դրանից, աւելացնում էր նա, այնտեղ գազանները շատ անգամ պատառոտում են մարդկանց, երբ նրանք պաշտպանելու զէնք չունէին իրանց հետ: Յանդիմանում էր իմ անհոգութիւնը, թէ ինչո՞ւ ես զէնք չէի կրում, թէ գոնեայ պէտք էր ունենալ իր մօտ մի ջուխտ ատրճանակ եւ խենջար:

— Ապա դու ինչպէ՞ս առանց զէնքի չվախեցար այն ձորը մըտնել, — հարցրի ես:

— Միթէ գիշերն առանց զէնքի մա՞ն են դալիս, — պատասխանեց նա ծիծաղելով իմ պարզամտութեան վրայ, եւ ցոյց տուեց մի ջուխտ ատրճանակներ, որ թաքցրած ունէր իր գօտիի մէջ:

Եթէ ցերեկ լինէր, Մարօն կը նկատէր, թէ որպէ՛ս կարմրեցայ ես ամօթից...

ԻԳ. ՆԵՐՔԻՆ ԿՈՒԻ

Հասնելով ծերունի որսորդի տունը, մենք գտանք բոլորին քնած: Մըհեն, որ բաց արեց դուռը, յայտնեց՝ թէ իր աղան տանը չէր եւ ոչ նրա հիւրերը դարձել էին իրանց «գնացած տեղիցէ: Ես մտածեցի, անպատճառ մէկ արգելք պէտք է պատահած լինի, որովհետեւ Կարօն եւ նրա ընկերները խոստացան, թէ մինչեւ երեկոյ կը վերադառնան: Յասոն իր ագարակումն էր: Նա տան երես չէր տեսնում, քանի իր մշակութեան գործերը վերջացած չէին դաշտերից. ձմեռոայ ձիւները միայն մի քանի ամիս նրան քշում էին դէպի տուն:

Մարօի առաջին հոգսը եղաւ պատրաստել ինձ համար մի բան ուտելու: Ընթրիքից յետոյ նա գցեց իմ քնելու շորերը, եւ ցանկանալով ինձ բարի գիշեր, ինքն եւս գնաց հանգստանալու:

Առաւօտեան ես զարթեցայ խիստ ուշ. երկար քունը բաւականին կազդուրել էր իմ առողջութիւնը. ես զգում էի ինձ զուարթ եւ նորոգած ուժերով: Սիրտս էլ սովորականից աւելի ուրախ եւ հանգիստ էր, որպէս թէ, ես գտնւում էի մի անսահման բաւականութեան մէջ, լոյս աշխարհում ոչինչ պակաս չէր մնացել ինձ, բոլորը՛, բոլորը՛, լրացրել էր այն արարածը, որին սիրում էի ես, որը սիրում էր ինձ: